

Արմենուհի ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՐՅԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Վ. ԱՆԱՆՅԱՆԻ ՎԻՊԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ

Խոսել Վախթանգ Անանյանի վեպերի լեզվական առանձնահատկությունների մասին ընդհանրապես, նշանակում է ներկայացնել ժողովրդի լեզուն ու նրա արտահայտչամիջոցները, քանզի Անանյանի լեզվանտածողությունը ժողովրդական է՝ պարզ ու անպաճույժ, հասու թե՛ մեծերին և թե՛ փոքրերին: Դիպոլ է նկատել գրականագետն Ա. Աղարաբյանը. «Հայրենի բնությունը, նրա գրկում ապրող կենսուրախ ու հոգով առողջ մարդկանց կենցաղը, ժողովրդական կենդանի լեզուն, ժողովրդի բառ ու բանը, ժողովրդական ասմունքողների արվեստը, ահա Անանյանի ստեղծագործության և տարրքը, և ակզենալրյուրը»:¹

Հենց այդ ժողովրդական լեզվանտածողության և լեզվագգացողության արդյունքն են Վ. Անանյանի արձակում հետաքրքիր դրսարդումներ ունեցող մի շարք շառայիսալական իրություններ, և դրանց թվում նաև հարցական նախադասությունների տարրեր տեսակների (հատկապես ճարտասանական հարցումների) առատ կիրառություններ, որոնք Անանյանի լեզվում ինքնանպատակ չեն որպես լեզվական տվյալ իրողության տակ փաստացի դրսարդում, այլ որոշակի ինքնատիպություն ունեն և ծառայում են նրա վիպական խոսքի ոճական գունավորմանը:

Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է, որ հարցական նախադասությունների ձևավորման գործում մեծ դեր ունեն «հասուլ հարցական արտաքերությունը /ինչերանգը-Ա.Ա./ և առանձնահատուկ հարցական բառերը (դերանուններ, շաղկապներ, մակրայներ), որոնց վրա էլ հաճախ ընկննում է հարցական արտաքերությունը»:² Միևնույն ժամանակ հարցական նախադասություններում, որոնք խոսակցական տարրեր իրավիճակներում ծառայում են համապատասխան վերաբերմունքի, հոյզի կամ զգացմունքի արտահայտմանը, պայմանավորված նյորի թելարդանքով, գրողի աշխարհայացքով կամ խոսակցական իրադրությամբ հարցական ինչերանգով կարող է օժտվել նախադասության ցանկացած անդամ: Ավելին, ժողովրդախոսակցական լեզվում, ինչպես վկայում է նաև Վ. Անանյանի ստեղծագործությունների լեզվի քննությունը, հարցական նախադասությունները ձևավորվում և դրսարդվում են ոչ այնքան հարցական իմաստ արտահայտող բառերի միջոցով, որքան տրամարանական շեշտի և համապատասխան ինչերանգի շնորհիլ, երբ հարցական ինչերանգով կարող է արտաքրվել ցանկացած բառ. «Ուրեմն առողջ ե՞ք...ոչինչ չպատահե՞ց...» /ՍԱ, 161/, «Ինձ ծեռ ես առնո՞ւմ, տո փալերու ծծկեր...» /ՍԱ, 161/, «Զահել ժամանակդ ա՞յս շավիրով գնացիր, պայի» /ՍԱ, 158/:

Հայ լեզվաբանության մեջ ընդունված է տարրերակել հարցական նախադասությունների երեք տեսակ՝ հավաստիական կամ բուն հարցական, լրացական և ճարտասանական կամ հորեսորական:

Բուն կամ հավաստիական հարցումները Վ. Անանյանի վեպերում շատ են, և դա բնական է, քանի որ վեպերում հաճախ են երկխոսությունները, չինացածի մասին հետաքրքրվել իմանալու պահերը. «Իսկ սա ո՞վ է, այս փոքրիկը» /Կօմ, 65/, «Քռավո, ճուտիկ, է՞լ ինչ են արել թեզ» /Կօմ, 66/:

Առանձին ուշադրության են արժանի այն հավաստիական հարցական նախադասությունները, որոնք բազմեզր են, և իմնականում բարդ նախադասությամբ արտահայտվում են մի քանի հարցում չինացածի վերաբերյալ: Այսպիսի բարդ նախադասությունները բնույթով իմնականում համադասական են, և այդ հարցումները հնարավոր են ներկայացնել նաև առանձին նախադասություններով: Այսպես՝ «-Ո՞վ է թեզ ուղարկել և ի՞նչ խնդիր է տվել,- ձայնը կեղծ խստացրեց խմբավետը» /Կօմ, 258/, «Չեզ մոտ գործերը ո՞նց է, իմի՞ Դիլիջանն ո՞ւմ ձեռքին է, Ալեքպոլից ի՞նչ տեղեկություն կա, Պետին,

¹ «Գրական թերթ», Եր., 1955, 30 սեպտեմբերի, N 36, էջ 4:

² Վ. Առաքելյան, Հայերենի շարակայություն, հ 1, Եր., 1958, էջ 14:

Գիքորը սաղ-սալամա՞թ են...,- վրա տվեց Ակոփին ու անհամբեր պատասխանի սպասեց» /Կօմ.262/³ «Քսկապես,- ինչպես միշտ՝ այս անգամ դարձյալ ուշ գիսի ընկա են:- Համ է ի ինչո՞ւ էր մրության մեջ մնում, ինչի՞ կրակին մտնեցավ... կամ էս անձրկին, էս խավարին ո՞ւր էր զնում ասել մաշկող Սինար» /Հվիք.173/:

Այս և նման կիրառությունները, հաջորդական հարցումների միջոցով շտապողականության, անհանգիստ լինելու կամ կարծ ժամանակում շատ բան ինանալու ձգտման արտահայտություն են:

Վ. Անանյանի ստեղծագործություններում հաճախ ենք համդիպում երկրայական վերաբերմունք, երկրներանք արտահայտող հավաստիական հարցական նախադասությունների: Մրանցում հարցում արտահայտող երկու և ավելի անդամներ իրար հետ կապվում են թե շաղկապով, որն իր իմաստով լինելով թեական՝ այդպիսի երանգով է օժտում ամրող նախադասությունը: Մենք նախընտրում ենք նման նախադասություններն անվանել երկրայական հարցական նախադասությունները: Ա. Արրահանջանք դրանք կոչում է երկրայական վերաբերմունք և երկրներանք արտահայտող հարցական նախադասություններ՝ որպես իրարից անկախ հավաստիական հարցական նախադասության երկու տեսակ:⁴ Ս.Դուկայանը այս նախադասություններն անվանում է «ընտրանքային կամ թե՝ հարցում»,⁵ առանձնացնելով դրանց երկու տեսակներ՝ երկեզր և բազմեզր՝ հարցումների բվով պայմանավորված: Ընդ որում, երկեզր հարցման տակ նկատի է առնում միայն այն երկու եզրերը, որոնցից առաջնում տրվում է հարցը իր դրական ձևով, երկրորդում՝ դրա ժխտական ձևն է: Պատասխանողին մնում է ընտրություն կատարել այդ երկու ձևերի միջև՝ ընտրելով կամ դրական, կամ բացասական պատասխանը: «Ախ, սրան էլ վերջ կա՞, թե՞ չէ» /Կօմ.255/, «Կամոն կանգ առավ շեմքում. տատանվում էր՝ մտնե՞լ, թե՞ոչ» /ՍԱ.87/:

Մենք ևս, ընդունելով նման նախադասությունների բաժանումը երկեզր և բազմեզր՝ տեսակների, երկեզր երկրայական հարցականներ ենք համարում այն նախադասությունները, որոնցում հարցման տակ են առնվում երկու կասկած հարուցող, բայց հավանական եզրերը: Ընդ որում, այստեղ նկատի ենք ունենում ինչպես վերոբերյալ օրինակները և դրանց նմանները, որոնցում ընտրությունը մի բարի դրական և ժխտական ձևերի միջև է, այլև նրանք, որոնք ընտրության երկու տարրեր, իրարից անկախ առաջարկ են ներկայացնում, և կամ պատասխանողը, կամ հենց հարց տվողը պետք է այդ տարրերակներից ընտրի մեկն ու մեկը: Մրանք ևս Ս. Դուկայանը դասում է բազմեզր տիպի մեջ: Մինչդեռ սրանք նընտրության մեջ գուգակցվող ձևեր են, անկախ նրանց՝ հականիշ բառերով են, թե իրարից բոլորովին անկախ ձևերով: Մեզ հետաքրքրողը դրանց ձևերի թիվն է: Օրինակ՝ «Ո՞ւր մնացին ընկերները: Արդյոք ազատվեցի՞ն, թե՞ ընկել են գիշակերների ճամփը» /Կօմ.129/, «Եվ այժմ նա անհարմար վիճակում տատանվում էր. շարունակե՞լ համոզել այդ հիմար միջոցից» /ՍԱ.124/:

Ընդ որում, ընտրանք հարուցող երկրորդ եզրը կարող է արտահայտված լինել և բարդ նախադասությամբ, ինչը չի ազդում նրա ընտրության եզրերի թվի վրա: Օրինակ՝ «Ապարատի չվկողի՞ց, թե՞ նրանց, որ մարդիկ համաստեն չեն հեռանում իր մորից, բայց ստիպված բռավի» /ՍԱ.53/:

Երկեզր երկրայական հարցական նախադասությունների ձևավորման գործում հատկապես մեծ է հականիշ բառերի դերը: Այսպես, «Արդյոք երձվո՞ն էր նա մոտայուս հարքանակի հավատով, թե՞ արտավալում էր հարազատներին դեռ չտեսած մտնելու համար» /Կօմ.203/, «-Չգիտեմ, կատա՞կ է անում, թե՞ լորջ է ասում» /ՍԱ.174/, «-Խանգարելո՞ւ եր եկել, թե՞ օգնելու, գոռաց բազմության վրա» /ՍԱ.97/:

Երկեզր երկրայական կառույցը բնորոշ է հատկապես ամեն հարցական նախադասություններին, որոնք մեծամասամբ ձևավորվում են անորոշ դերայի դրական և ժխտական ձևերով («Լին՞ թե՞ չինել»):

³ Այս և հետագա օրինակներում ընդգծում ենք հարցման բոլորդակությունն արտահայտող բառերն ու կապակցությունները՝ հարցում ծիշտ բնկավելու նկատությունով:

⁴ Ս. Արքա և ամաման, Հայոց լեզու (Հարակյալաւություն), Եր., 2004, էջ 85:

⁵ Լեզվի և ոճի հարցեր, V, Եր., 1978, էջ 122:

⁶ Օրինակները բերում ենք Վախրանգ Անանյանի ստեղծագործություններից:

Վ. Անանյանի ստեղծագործություններում երկեզր հարցական նախադասությունները ձևակիրկել են.

ա) անորոշ դերքայով՝ «Կամոն կանգ առավ շեմքում. տատանվում էր, մտնել, թե՞ոչ» /ԱԱ, 87/:

բ) բայի եղանակային ձևերով՝ «Գիբորը տատանվում էր. առաջ գնա՞», թե՞ վերադասնա» /ԱԱ, 196/, «Վերևում պատվող կրունկը մնացել էր նոլորված՝ խմբին հետևի, թե՞ իշնի ընկերոց մոտ» /Հգ, 130/:

գ) անվանական բաղադրյալ ստորոգյալով՝ «Չէ, ասա բայլշկին ես, թե՞չ» /Կօմ, 138/:

դ) գոյականի տարրեր հողովածներով, որոնք հանդես են զայիս հիմնականում լրացման դերով՝ «Ի՞նչ իմացար ինչի՞ց է վեր ընկել, բանո՞ց, թե՞ անզօտշությունից» /ԱԱ, 150/, «Առաջ ո՞ր արտք հնձենք, Կաղնուտի՞նը, թե՞ Ռգերինը...» /Հվիք, 102/:

Բազմեզր երկրայական կամ ընտրանքային են համարվում այն հարցական նախադասությունները, որոնցում ընտրության օբյեկտ են դառնում երեք և ավելի եզրեր: Օրինակ՝ «Քարի նախա՞նձ էր դա, մրցույթո՞ն, թե՞ մի այլ զգացմունք, նա իրեն հաշիվ տալ չէր կարողանում» /Հգ, 16/, «Չհասկացանք՝ թե՞ն էր վնասվել, հիվա՞նդ էր, թե՞ ուժասպար էր եղել երկար ճանապարհորդությունից» /Հգ, 130/, «Աղջկա մատների հպումի՞ց, սրտազին այդ նվերի՞ց, թե՞ Վարսիկի ժախտից չորբան պատանին շփոքեց ու շառագունեց» /Կօմ, 40/: Սրանցում բարեկվում են բոլոր հնարավոր տարրերակները, և դրանցից մեկի ճիշտ լինելը կվերացնի այդ երկրայական վիճակը:

Վ. Անանյանի վեպերում բավական հաճախ ենք հանդիպում լրացական հարցական նախադասությունների, որոնք դրսորվում են և գրական նորմին համապատասխան լեզվամիջոցներով և խոսակցական ու բարբառային ձևերով: Վերջիններս հատկապես հանդիպում են ենթասների խոսքում՝ կերպարի տիպականացման, տվյալ լեզվական միջավայրի կերտման նպատակով: Օրինակ՝ «-Չանի՞ օրվա ուտելիք դնենք ձեզ հետ» /ԱԱ, 217/, կամ «-Ծո օդո՞ւ, որկե՞ կուզաս» /Կօմ, 227/, «-Մի տես, նա՞ն, դեռ բաց է: Հինա ձվի դեղնուց չտա՞նք» /ԱԱ, 127/, «-Են սիրու փոնմիուավոր քոչուններին ի՞նչ են ասում քո գրքում, գիտնական բայա» /ԱԱ, 223/:

Ի տարբերություն հավաստիական հարցական նախադասությունների, լրացական հարցական նախադասությունները ենթադրում են պատասխան այս կամ ոչ պատասխանական բառերով, ինչպես նաև՝ դրանց գուգահեռ հարցման բովանդակությանը համապատասխան պատասխան նախադասությամբ կամ բառով. օրինակ՝ «-Չանի դիմջացա՞վ... - Հա... լազար տվեց...» /Հվիք, 158/:

Չատ դեպքերում էլ հարցման տակ վերցվող բառն է հաստատական հնչերանց դող դառնում պատասխան, որին կարող է հաջորդել կամ չհաջորդել լրացուցիչ տեղեկություն: Այսպես՝ «Ուրեմն Հայաստանը հիմի կառավարություն ունի՞...»

- Ունի, - բնծիծաղ տվեց Գրիգորի ազգական Սկրտիչը» /ՈւՏԿ, 343/, «- Ուրեմն մեր բուրքերը սրանց հարազատներն են...

- Համանրդ, հարազատներն են»:

Չատ անգամ այսպիսի նախադասություններում պատասխանը հարցով է տրվում: Այսպես՝ «- Ուրեմն քո մերն է՞լ է խորը:

- Իմո՞ն է խորը, - բողոքեց Արեգնազը» /Հվիք, 108/:

Վ. Անանյանի ստեղծագործության մեջ ոճարտահայտչական մեծ դեր ունեն ճարտասանական հարցական նախադասությունները:

Ժողովրդի ծոցից ելած, նրա բառ ու բանով սնված զավակի՝ Վ. Անանյանի վիպական խոտքը չափազանց հարուստ է ճարտասանական հարցմանը, ինչի այդքան ազատ ու առատ կիրառումն առաջնահերթորեն պայմանավորված է նրա վեպերի թեմատիկայով: Ե՛վ պատերազմական թեմայով («Կրակե օպակի մեջ», «Դժոխիք դռան զաղութնիքը»), և զիտարկածային («Սևանի ափին», «Հովազածորի գերիները») և հիմնակենսագրական («Հին վրանի փոքրիկ բնակիչը», «Ո՞ր են տանում կածանները») բնույթի գործերում նման նախադասությունների օգտագործման նպատակը մեկն է. կենտրոնացնել ընթերցողի ուշադրությունը որևէ հարցի վրա, սրել իրադրությունը, առաջանել լարված հետաքրքրություն, որից հետո ցոյց տալ դրանց, լուծման ճանապարհը: Իսկ հատկապես զիտարկածային վեպերում ճարտասանական հարցման առավել հաճախակի գործածությունը պայմանավորված էր նրանով, որ մանկապատա-

նեկան ժանրի այս գործերն իրենց արկածային բովանդակությամբ և սյուժետային կտրուկ փոփոխություններով հանդերձ պահանջում են ոչ միայն առաջադրվող հարցերի ճիշտ, գիտական մեկնաբանություն, արկածային ինտրիգների հմուտ ստեղծում ու լուծում, այլև ունեն նկարագրվող երևույթների ճանաչումը ապահովող դաստիարակչական նշանակություն։ ճարտասանական հարցմանը ընթերցողի ուշադրությունը կենտրոնանում է տվյալ երևույթի վրա՝ չքուլացնելով հետաքրքրությունը մինչև նրա վերջնական պարզաբանումը։ Ընդ որում, ճարտասանական հարցումն առատ է ոչ միայն հեղինակի, այլև հերոսների խոսքում՝ ժողովրդականին բնորոշ հետաքրքիր ձևերով ու միջոցներով։

Հեղինակային խոսքում ճարտասանական հարցական նախադասությունները հիմնականում ներկայանում են որպես Անանյան-քնագետի, Անանյան-մարդու տարիներով կուտակած փորձի, գիտելիքների փոխանցման միջոց, կամ էլ հեղինակի քնարական խոհ, օրինակ՝ «Ավոր ինչպես՞ն գրյացալ ու հոսեց ցեխն այն լեռներից, որոնց լանջերում ես միայն ծաղիկ ու կանաչ եմ տեսել և մեկ էլ ձյուն» /Կոմ, 45/, «Ժողովանով մենք ձկներին չենք զրկում սերունդ տալու հնարավորություննց» /ՍՍ, 20/, «Ինչո՞ւ էր այդպես վտխվել մեր սրտարաց Սաքը ամին» /Հվիք, 110/։

Ճարտասանական հարցումը Վ. Անանյանի հերոսների խոսքում տիպականացման, խոսակցական իրական միջավայր ստեղծելու, հետաքրքիր խոսք կառուցելու արդյունավետ միջոց է։ Այսպես՝ «Թոշունները աշնան վերջին կշվեն կգնան հարավ և նրանցից շատերը չչենանան ով գիտի որ աշխարհում Սուլան՝ մ, Իրան՝ մ, թէ՞ Աֆրիկայում...» /ՍՍ, 220/։ «Եվ ի՞նչ ես կարծում, ինչի է եղան շատ ման զալիս։ Մեղրի կարոտից» /ՍՍ, 236/։ «Ես հուսահա՞տ... Չէ... Ինչի՞ պիտի հուսահատ լինեմ, ճեզ պես ընկերներ ունեմ» /ՀԳ, 84/։

Ընդ որում, Վ. Անանյանի օգտագործած այդպիսի ճարտասանական հարցականների մեծ մասը ժողովրդական լեզվանտածողության արդյունք են։ Մասնավորաբար նկատի ունենք կերպարների խոսքում դրանց բավականին հաճախ դրսությունը այն տեսակը, երբ ժխտական կառուցյուն դրական, իսկ դրականով ժխտական, մերժողական միտք է արտահայտվում, հաղորդվում։ Ժողովրդական խոսքին բնորոշ այս երևույթը, երբ «գրական ճարտասանական հարցերն ունեն բացասական նշանակություն, իսկ բացասականները՝ դրական», ժամանակին դիպուկ նկատել է Մ. Աքելյանը⁷։ Այսպես՝ «...Լավ, Բագրատն էրային խամ բան կանի՞ որ ... մինչև ճներն աշքովս չտեսնեմ ես ձու բաց կը ողոնե՞մ» /ՍՍ, 116/։

Այսուղեա բացասական միտքն արտահայտվել է դրական կառուցյունի միջոցով՝ հերոսի խոսքը դարձնելով ավելի հասու, կարծիքը՝ անբեկանելի։ Եթե հեղինակը փոխարենը օգտագործեր «չի ամի» և «չեմ բրոնի» ժխտական ստորոգյաներով կառույցը, ժխտման զաղափարը անշուշտ նոյնքան ընդգծված չէր դրսությունի, ինչպեսայս դեպքում։ Երբ դրական ճարտասանական հարցմանը ժխտումը վերջնական է, մտավորիչությունը՝ բացառված։ Նման կառուցյուններում նախադասության ցանկացած անդամ, կախված խոսակցության բնույթից ու իրադրություննից, կարող է դրվել հարցման տակ։ «Աշխարհում կա՞» շուն, որ հանգիստ մնա այն պահին, երբ իր տերը կտանգի մեջ է...» /ՍՍ, 66/, «Ո՞ր նկարիչը կարող էր կտավի վրա տալ այն նրին ու ներդաշնակ, նրբերանգները» /ՍՍ, 145/, «Ինչպես՞ն կարելի է առանց ակադեմիայի այսպիսի հնորդյունները կտրել իրենց միջավայրից...» /ՍՍ, 215/։ «Սեր մեջ նրանից շատ ո՞վ է մնշվել» /Կոմ, 58/, «Ո՞ւմ մտքով կանցներ, որ քշքառ այդ գեղջկուհու կրծքի տակ բարախում է անձնութագրյալիկի սիրութը...» /Կոմ, 183/։

Հակառակ երևույթը՝ ժխտական կառույցի միջոցով ճարտասանական հարցմանը հաստատական միտք արտահայտելը, որը նոյնպես առկա է Անանյանի ստեղծագործություններում ընդ որում, ինչպես հեղինակային, այնպես էլ հերոսների խոսքին՝ վերջինի գերակայությամբ։

Հեղինակային խոսքում սրանք իմբնականում քնարական շունչ ունեն, դառնում են հեղինակի քնարական խոհ՝ հարցական հնչերանգով։ «... Ավելի շատ էր բորբոքվում իր մեջ հովի կարոտը, մեր սարերի կարոտը։ Եվ ո՞նց չկարոտես» /Կոմ, 7/ կամ՝ «Ասենք,

⁷ Մ. Աք եղան 6, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 555։

Արարատյան քերրի հովտի ո՞ր գյուղում այդպես չէ, անծանոթ մարդուն երբեմն նոյն միևնույն գյուղամիջոց կոպտությամբ քարշ են տալիս տուն... հյուրասիրելու» /ՀԳ, 86/:

Ի տարրերություն ենթինակայինի, երրուսների խոսքում նման կառույցներով հաստատական միտք է արտահայտվում. «-Ենքան ագռավի ձվեր են խաշել-կերել... Բա ուսու դրա զոհը չի՞...» /ՍՍ, 54/, «-Ուրեմն որսկան Ասատուրի բռուսն զիսին փափախ չկա», որ ուրիշները նրանից առաջ ընկնեն...» /ՍՍ, 185/, «Չորանը ես չե՞ն, որտեղ ուզենամ, էնտեղ է կարածացնեն» /Կօմ, 132/:

Ժիտական կառույցով հաստատում արտահայտող հարցական նախադասություններում շատ անգամ առկա է երկրայության նրբիմաստը, երբ արտահայտված մորում կասկած կա. «Ի՞նչ եք կարծում, այդ բանը ձեր ուժերից վեր չէ»,-հարցրեց ուսուցիչը /ՍՍ, 82/:

Երեմնն էլ ճարտասանական հարցումը ստանում է իր համար անսովոր գործառույթ՝ հանդես գալով իբրև հավաստիական հարցման պատասխան. «-Պապի, մորքին ի՞նչ ես անելու: -Են որ Հասմիկից մատանու ակը խլեցիք-ուղարկեցիք քանզարան, կարծում եր ես նրան առանց նվերի՝ եմ բռնվելու» /ՍՍ, 240/:

Մեր հաշվումներով Վ. Անանյանի հերոսներից ամենից շատ ծերունի Ասատուրի («Սևանի ափին») խոսքում ենք հանդիպում ճարտասանական հարցական նախադասությունների: Փաստը պայմանավորված է նրանով, որ հեղինակը հերոսին համարում է խորհրդանշական կերպար: Նա ժողովրդական իմաստնության կրտղն ու մարմնացումն է, որն իր երկարաւու կենսափորձի արդյունքում ամրարած գիտելիքները փոխանցում է երեխաններին: Այդ փոխանցման լավագույն ու նախընտրելի միջոցներից մեկն էլ ճարտասանական հարցումն է, որով նախ կենտրոնացնում է իրեն շրջապատողների ուշադրությունը որևէ իրողության կամ երևույթի վրա, ապա տալիս է դրա մեկնարանությունը: Օրինակ՝ «-Ասրեւ: Էսկ ինչի՞ է լոյնս վախկոտ /բարբ-Ա.Ա./: Իրեն կարմիր գոյնին պատճառով: Որ կողմը շարժվում է՝ հեռվից երևում է: Հիմի ձեզ եմ հարցնում, կարմիր բաղր իրեն եղ զույնով կարո՞ղ է շարաթներով բռիս նատել դամշկութում...» /ՍՍ, 38/, «...Էսկ բռնորի մոր ահից ո՞վ կմտնի նրա բռյնը... Էն տեսակ սիրելի մոր ծագը իսկի արագ վազելու կամ պաշտպանվելու կարիք ունի՞...» /ՍՍ, 105/: «-Ո՞նց կարող է ամեն բան զբուրում լինի, -հարցրեց նա նեղացած: ...Դե բող ձեր զբուրն ասեն, թե էն լողացող բաղերի մի մասն ինչո՞ւ է սիրուն, փոխփոխավոր, հորիրատին տալիս արևի տակ, իսկ մնացածները քարի գոյնի, անշնորիք բաներ են» /ՍՍ, 24/:

Ժողովրդական լեզուն գործառում է նաև հարցական նախադասության մի այլ տեսակ՝ կազմված ով դերանունով և դիմավոր բայածնում, որը միշտ եզակի թիվ երրորդ դեմքով է հանդես գալիս (ո՞վ գիտի, ո՞վ է տեսել, ո՞վ կտար և այլն): Սրանք զգայական վերաբերմունք արտահայտող միջանկալ նախադասություններ են՝ հաճախարենք իրակություններ Վ. Անանյանի ստեղծագործությունների լեզվում. «Ներքին ծնունի վրա պարզ երևում է մեծ սպիտ: Ո՞վ գիտե՞ ո՞ր ֆրոնտում մորորված մի զնդակ ջարդել է ծնուն ու իր հետ տարել ատամների առաջին շաբթը» /Կօմ, 114/, «-Անարխիս է՝, տո՛, ո՞վ է տեսել, որ առանց վարչության հանձնայնության կողմոցի հողանար ցանկալապատվի» /ՍՍ, 105/:

Մնում է ավելացնել, որ «ո՞վ գիտե» կապակցությունով հարցական նախադասությունները ավելի շատ հավաստիական հարցում է արտահայտվում, իսկ «ո՞վ է տեսել», «ո՞վ կտա» և նման կապակցություններով հարցականները՝ նաև ճարտասանական, երբ դրական կոպույցով ժխտվող միտք է արտահայտվում. «-Վիհ, քուանամ ես, երեաք չանգերելով բացականչեց պառավը, -ո՞վ է տեսել, որ հանդի ձուն հավի տակը դնեն» /ՍՍ, 95/:

Ժողովրդական խոսքին բնորոշ հարցական նախադասության դրսերում պիտի համարել նաև սովորական նախադասություններում որոշ բառերի հարցական հճնչուածով այնպիսի գործածությունները, երբ խոսողը փորձում է իր կողմից ներկայացվող երևույթը, իրադարձությունը հավաստի և իրական դարձնել որևէ փաստի հիման վրա (սովորաբար այդ փաստը դիմացինի դրական, հաստատական վերաբերմունքն է ներկայացվող իրողության նկատմամբ): Հարցում արտահայտող բառերի դեպքում հանդես են գալիս իմնականում ստորոգյաները պարզ (տեսա՞ր, տեսա՞ր, գիտե՞ս, մի՞տք է (մի՞տք է), իիշո՞ւմ ես և նման այլ ձևեր), որոնք որպես ոճավորման միջոցներ՝

հերոսների խոսքը դարձնում են ավելի իրական ու անմիջական: Ինչպես՝ «Տեսա՞ր, պատի՛, որ ոչ երկրաշարժ եղավ, ոչ քամի բարձրացավ,- լուրջ պատասխանեց Գրիգո-րը» /ՍՍ,161/, «Հողեմ նրա պրաֆեսոր զլուխը, տեսա՞ք ոնց կապ գցեցի...» /ՍՍ,217/, «Մի՞տո՞ւ, որ մեղքի հոսից ճանաբարի ճակատն էիր բարձրացել» /ՍՍ,236/: Ի դեպ, սրանք որոշ առնչություն ունեն լրացական հարցական նախադասությունների հետ, և շատ դեպքերում կարող են ակնկալել պատասխան «այո» կամ «ոչ» պատասխանա-կան բառերով:

Դարտասանական հարցական նախադասությամբ երբեմն կարող է արտա-հայտվել նաև **հանդիմանամբ**: Ինչպես նկատել է Ս. Արքահամյանը, երբ «հարցական նախադասության մեջ հուսորականությունն ու հանդիմանությունը տեղ են գտնում միաժամանակ»: հարցական նախադասությունն ունենում է և մեկի, և մյուսի տարրը, հատկանիշը»:⁸ «-**ճանաչեցի՞ր**, թե ով ես և ում զավակը,- հերթական հարվածը հաս-ցրեց Աշոտը: Չո հայրը տաշած տուֆից երկու հարկանի տուն շինեց: Ո՞ւմ աշխա-տանով, իսկի հարցը եւ ես, պիտի Սարգիս...»/ՀԳ,119/: «Տուր, բա փափախ չկա՞ ձեր գլխին, եգուց մեր աղջկներին էլ կտանեն, բա տղամարդկություն չկա՞ ձեր մեջ» /Կօմ,52/: «Այ դանազներ, տերություն ա, բուվ ու բուփիսանա ունի, դուք քանի՞ գլխա-նի եր, որ թվանք եք քաշում տերության վրա» /Կօմ,52/:

Վ. Անանյանի վեպերում ճարտասանական հարցմանը երբեմն կարող է ար-տահայտվել նաև **զայրոյթ, ցասում, հաճախ էլ՝ զարմանք**. «Եվ դուք ձեզ կոմերիտա-կաննե՞ր եր համարում...» /ՍՍ,69/: «- Այ թեզ բան, առանց հորի կողի՞, -բացականչեց նա՝ մեջքը շտկելով» /ՍՍ,48/, «-Քոռանամ ես, այ տղա, բա ամբողջ օրը ո՞նց ես սոված մնացել...» /ՍՍ,75/:

Նման հարցական նախադասություններում համապատասխան հնչերանգին զուգահեռ հաճախ առկա է նաև բացականչական հնչերանգը: Կարող են նաև հարցու-մից առաջ առկա լինել զարմանալ, քար կտրել, ապշել և նման իմաստ ունեցող բառեր, որոնցով էլ պայմանավորվում է նախադասության հետագա բովանդակությունը.

«Պատը զարմացավ: Այ թեզ բան...Այդ ի՞նչ անտեսանելի ուժ է ողի միջոն քոչունին դեսի իրեն քաշում...» /ՍՍ,218/: «-Ի՞նչ, սահմանն անցե՞լ է, կոչե՞ն է տարածել: Զարմանքից աշքերը չենց ցրտից կապտած պատանու վրա» /Կօմ,146/:

Վ. Անանյանն իր վիպական արձակում բավականին հաճախ ու հնտորեն է կի-րառել հարցական նախադասության մի հետաքրքիր ձև, երբ հարցական նախադասու-թյունը բնույթով իիշենում է **ներքին խոսք** և հանդես է զայխ որպես որդիշի ներքին խոհ՝ հարցական հնչերանգով: Հիմնականում այդ հարցական նախադասություններն որդիշի խոսք են, որ հեղինակային խոսքին կապվում են մտածել, մտաստանցվել, մտքով ամցման և նմանիմաստ բառերով: Այսպես՝ «Կամոն լաւում էր ու անհանդեր մնածում. «Ե՞ր ենք փակելու այդ կնոջ բերանը... Ե՞ր ենք բացելու Աև ժայոի ու Գիլի լճի գաղտնիքները...» /ՍՍ,217/, «Տեղում կանգնած մտածեց, տատանվեց: Էհ, ո՞վ էր զժվել մենակ ճամփա զնալ ժայռերով ու ձորերով...»/ՀԳ,22/, «Ինչի՞ է խեթում, չինի՞ թե սրի-կան էի իինն է մնացել», անցակ պատանու մորով» /Կօմ,236/:

Երբեմն հարցմանը նախորդող այդ **հուշող** բառերը կարող են զեղչված լինել. «Զարմացած նայում են ... պատանուն և «Կասյա՞ն, զաղտնի ժողով» /Կօմ,89/: Այս-տեղ ընդգծված հարցումից առաջ մտածում են բայր զեղչված է, բայց հստակ զիտակցում է: Սակայն այն կարող է նաև չզիտակցվել: Այնուամենայնիվ կառույցը չի դադարի հասկացվել որպես մտածական հարցական նախադասություն: Այդպես է նաև հետևյալ օրինակներում. «Օգնություն կանչել ընկերներին ամաչում էր /մտածում էր-Ա.Ա./, ի՞նչ կամ այն առցիկ» /ՍՍ,66/, «Ի՞նչ անել, ո՞ւր զնալ /մտածում էր-Ա.Ա./: Չէ՞ որ խոստացել էր այս զիշեր քոուզիկները զլողերը հասցնել»: /Կօմ,69/, «Պատանիների սիրու սեղմում էր /մտածում էին-Ա.Ա./, ո՞ւր է տանում այդ խորիդավոր անցք» /ՍՍ,44/, «Աերջին դեպքերը նրան շշմեցրել էին /մտածանցվում էր-Ա.Ա./: Ո՞ւր մնացին ընկերները» /Կօմ,105/:

⁸ Ս. Արքահամյան, Ժամանակակից հայերենի շարակելության մի քանի հարցեր, Եր., 1962, էջ 83:

Մենք հակված ենք նմանատիպ նախադասությունները կոչել մտածական հարցական նախադասություններ, որոնցում հարցումը կարող է լինել և՝ հավաստիական, և՝ լրացական, և՝ ճարտասանական՝ դրստրվելով յուրօրինակ ձևի՝ ներքին խոհի միջոցով։ Բնշ որ տեղ մտածական հարցական նախադասություններն առնչվում են ազատ անողության խոսքին, բայց վերջիններից տարրերվում են թե՛ հարցական հնչերանգով, թե՛ ընույթով։

Մտածական հարցումը բնորոշ է ինչպես հեղինակային, այնպես էլ կերպարմերի խոսքին։ Ըստ հաճախ դա կարող է լինել ոչ թե մեկի մտածածք, այլ բոլորի խոհը, եթե որևէ խնդրի հանդիպելիս բոլորն էլ մտքում նույն հարցն են տալիս իրենց՝ իրարից անկախ։ Այսպես՝ «Հետքը զննեցին /պատաճիները-Ա.Ա./. իր ոտնատեղերով եւս չի եկել։ Բայց ո՞ր է զնացել, ին երկինք չի բռել.../աղվեսը-Ա.Ա./» /ՍՍ,232/։

Մտածական հարցումը հաճախ կարող է գուգորդվել ճարտասանական հարց-մանը՝ նախորդելով կամ հաջորդելով վերջինիս։ «Ո՞ւր զնալ, ո՞ւմ դևմ, ինչի՞ համար։ Այսր չի՞ որ մերոնք են, հայ են, «հայր հայի դեմ»։ Ելի կոմիսարի դեմ ոչինչ, կարելի է..., բայց դու արի Մարկոսենց Աքոյի վրա կրակիր, ախր ո՞նց սպանես էն մարդուն, որ կոմիսարի, տերուերի, զորքաների ճեղքից փողը խլեց, քեզ տվալ» /Կօմ,171/։

Հարցական նախադասությունների համառոտ քննությունը վկայում է. Վ. Անանյանը ժողովրդական բառ ու բանի հմտությունը օգտագործող է, որը կարողացել է վարպետութեան մշակել ժողովրդականին բնորոշ լեզվաձևերը և դրանք ճաշակով ու հմտորեն կիրառել գեղարվետական գրականության մեջ՝ դարձնելով այդ տարրերը գրական լեզվի ճոխի հարատության անտրոհելի բաղադրամասը։

Համառոտագրություններ

- ԿՕՄ-Վ.Անանյան, Կրակե օղակի մեջ, Եր., 1930:
 ՀՎՓԲ - Վ.Անանյան, Հին վրանի փոքրիկ բնակից, Եր., 1978:
 ՀԳ - Վ. Անանյան, Հովազաձորի գերիները, Եր., 1984:
 ՍՍ - Վ. Անանյան, Սևակի ափին, Եր., 1953 և 1970:
 ՈՒՏԿ - Վ. Անանյան, Ո՞ւր են տանում կածաները, Եր., 1980:

ВОПРОСИТЕЛЬНЫЕ ПРЕДЛОЖЕНИЯ В РОМАНИЧЕСКОЙ ПРОЗЕ В. АНАНЯНА

Резюме

A. Avagyan

В. Ананян в своих произведениях смог искусно употребить не только три основные виды вопроса (утвердительные, пояснительные и риторические), но благодаря своеобразному языкомышлению в вопросительных предложениях, он ввел новые модели: двубортные и многобортные утвердительные вопросы, мыслительные вопросительные предложения. Благодаря своему общенародному языкомышлению, писателю удалось применить разнообразные проявления вопросительных предложений, способствующих образности героев-персонажей и созданию прозаической атмосферы в своих произведениях.